ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2023թ. № 480

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ԹԻՎ 17 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Բաղդասար Ժորայի Թադևոսյանի 2023 թվականի հունիսի 7-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակ համայնքի բնակիչ Բաղդասար Ժորայի Թադևոսյանին 2021 թ. հունիսի 21-ին տրամադրված թիվ 17 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգել 10 (տաս) ամիս:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ.Զոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2023թ. № 481

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԾԱԾԿԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐՅՈԺԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 0,09955 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սերյոժա Արտավազդի Շահբազյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Մուրացանի փողոցի վրա գտնվող, 06-006-0463-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված հողամասի չափը կազմում է 0,13955 հեկտար որից 0,04 հեկտարը Սերյոժա Արտավազդի Շահբազյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,09955 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1994 թվականին կառուցված բնակելի տունը, աստիճանահարթակը, օժանդակ շինությունը և ծածկը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006NJP8BKL) և Սերյոժա Արտավազդի Շահբազյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սերյոժա Արտավազդի Շահբազյանի (ծնված 05.01.1955թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Մուրացանի փողոցի վրա գտնվող, 06-006-0463-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,04 հեկտար մակերեսով հողամասի, 71,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 4,4 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի, 45,2 քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինության և 3 քառակուսի մետր մակերեսով ծածկի նկատմամբ:

2. Սերյոժա Արտավազդի Շահբազյանի կողմից տիրապետվող 0,04 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,09955 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 1 215 505,5 ՀՀ դրամ (1 քմ 1221 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Սերյոժա Արտավազդի Շահբազյանին:

3. Սերյոժա Արտավազդի Շահբազյանի կողմից տիրապետվող 0,13955 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա կառուցված 71,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 4,4 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակին, 45,2 քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինությանը և 3 քառակուսի մետր մակերեսով ծածկին տրամադրել «ք. Սպիտակ, Մուրացանի փողոց, 2-րդ փակուղի, 1 բնակելի տուն» հասցեն:

4. Սերյոժա Արտավազդի Շահբազյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ՝ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 16

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2023թ. № 482

ԱՇՈՏ ԺՈՐԱՅԻ ՊԱՊՅԱՆԻՆ, ԺԱՆԵՏԱ ՀԱՅԿԱԶԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ, ԿԱՐԵՆ ԱՇՈՏԻ ՊԱՊՅԱՆԻՆ, ԷԼՄԻՐԱ ԱՇՈՏԻ ՊԱՊՅԱՆԻՆ ԵՎ ԷԴՎԻՆԱ ԱՇՈՏԻ ՊԱՊՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՐԹԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ, հիմք ընդունելով թիվ ՎԴ/1461/05/22 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2023 թվականի փետրվարի 2-ի վճիռը՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Ժորայի Պապյանին, Ժանետա Հայկազի Առաքելյանին, Կարեն Աշոտի Պապյանին, Էլմիրա Աշոտի Պապյանին և Էդվինա Աշոտի Պապյանին ընդգրկել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրի աղետի հետևանքով անօթևան մնացած անձանց հերթացուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ հունիսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2023թ. № 483

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-006-0232-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,60185 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը՝ (քաղվածք 06006LQBWTTL) ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0232-0011 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0,60185 հեկտար մակերեսով արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տալ «Սպիտակ քաղաք, Վանաձորի խճուղի 36/1 հողամաս» հասցեն (փոստային դասիչ 1802):

3. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2023թ. № 484

ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱՆԿՈՒՂԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2460527 վկայականը Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060069RZPVAE) և Մխիթար Մաթևոսի Մակարյանի (ծնված՝ 08.10.1975թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մխիթար Մաթևոսի Մակարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ քաղաքի Սուրեն Ավետիսյան փողոցում գտնվող 80,50 քառակուսի մետր մակերեսով կիսանկուղին տրամադրել «ք. Սպիտակ Սուրեն Ավետիսյան փողոց 6 շենք, 43/1 կիսանկուղ» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ.հունիսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2023թ. № 485

ԼԵՎՈՆ ԱՆԱՆՈՎԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 34-րդ և 34.2-րդ կետերով, 35-րդ կետի «դ» ենթակետով, 35.1-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14062023-06-0034 վկայականը, Լևոն Անանովի Մաթոսյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, Սպիտակ ք., Ս.Ավետիսյան փողոց, 46/3 ավտոտնակ» հասցեում գտնվող, 06-006-0502-0050 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00296 հեկտար մակերեսով հողամասը՝ 85 470 ՀՀ դրամ (1 քմ 2887,5 ՀՀ դրամ), իսկ օրինական ճանաչված 29,48 քառակուսի մետր (արտաքին) մակերեսով ավտոտնակը 49 320,04 (1 քմ 1673 ՀՀ դրամ) ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Լևոն Անանովի Մաթոսյանին (ծնված՝ 24.07.1967թ.) :

2. Լևոն Անանովի Մաթոսյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Լևոն Անանովի Մաթոսյանից հետ գանձել միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

4. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գայանե Չոբանյանին և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2023թ. № 486

ԼԵՎՈՆ ԱՆԱՆՈՎԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 34-րդ և 34.2-րդ կետերով, 35-րդ կետի «դ» ենթակետով, 35.1-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13062023-06-0028 վկայականը, Լևոն Անանովի Մաթոսյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, Սպիտակ ք., Ս.Ավետիսյան փողոց, 46/2 ավտոտնակ» հասցեում գտնվող, 06-006-0502-0049 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00284 հեկտար մակերեսով հողամասը՝ 82 005 ՀՀ դրամ (1 քմ 2887,5 ՀՀ դրամ), իսկ օրինական ճանաչված 28,42 քառակուսի մետր (արտաքին) մակերեսով ավտոտնակը 47 546,66 (1 քմ 1673 ՀՀ դրամ) ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Լևոն Անանովի Մաթոսյանին (ծնված՝ 24.07.1967թ.):

2. Լևոն Անանովի Մաթոսյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Լևոն Անանովի Մաթոսյանից հետ գանձել միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

4. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գայանե Զոբանյանին և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2023թ. № 487

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-061-0702-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 1,00000 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն և 2021 թվականի փետրվարի 25-ի 233-Ն որոշումներով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 12-ի թիվ 460 որոշումը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06061HW7QYAC) ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի սահմանագծից դուրս գտնվող՝ 06-061-0702-0001 կադաստրային ծածկագրով անտառային նպատակային նշանակության հողամասից առանձնացված 1,00000 հեկտար մակերեսով անտառ հողատեսքի հողամասին տրամադրել «Սպիտակ գյուղ Հարթագյուղ, 3 անտառային հողամաս» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2023 թ. № 488

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԱՐԳԻՍ ԳՈՐԻՍԻ ԱՐՂԱՄԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման 31-րդ կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08122020-06-0026 վկայականը և Սարգիս Գորիսի Արղամանյանի (ծնված՝ 08.07.1982թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սարգիս Գորիսի Արղամանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի «Մարզ լոռի, համայնք Սպիտակ ք. Մյասնիկյան փողոց 8 բնակելի տուն» հասցեում գտնվող 06-006-0271-0056 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,05900 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունիսի 2023թ. № 489

«ԱՐԳԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՎՈՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐԳԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՎՈՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2023 թվականի հունիսի 20-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐԳԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՎՈՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66887552) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Լուսաղբյուր 1փ. 26» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 48 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 20
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունիսի 2023թ. № 490

«ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՐՉԻՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՐՉԻՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2023 թվականի հունիսի 20-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՐՉԻՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66937974) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Պանրագործների փ. տ2» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 21,42 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 20
ք. Սպիտակ